

ծածնին մեք ազատ արարաք զվանքս միարանաւք յամէն չարէ վ(ա)ս(ն) փրկուիթե(ան) հոգս մերոց որ խափան...» (Գարեգին Եպս. Յովսէփեան, «Հաւուց Թառի Ամենափրկիչը», էջ 71): Ինծի ծանօթ չէ Մամբան տիկնոջ գերդաստանը⁽³⁾:

Գրիգոր Բ եղած է Թաթարաց ծառայութեան մէջ: Կիրակոս Գանձակեցի կը վկայէ որ «Ձայս պատմեաց մեզ Գրիգոր իշխանն, որդի Մարգարանին, եղբայր Ասլանբէկին, Սարգսի եւ Ամիրբային, յազգէ Մամիկոնէից, զոր իւր իսկ լուեալ էր ի մեծ առնէ միոջէ (Թաթար) ի կարի աւազաց, յորում անուն էր Ղութունուին, յաւուր միում յուսուցանել նորա զմանկագոյնսն» (Մելիք-Օհանջանեան, էջ 272-273): Ուրեմն ըստ տրուած վկայութեան Գրիգոր Բ սուսուցիչ էր Թաթար մեծ իշխանաւորի մը զաւակներուն: Ուսուցումը ըստ երեւոյթի արտաքին, այսինքն ձիաւարութիւն, որսորդութիւն կամ նման բան մը չէր, այլ շատ հաւանաբար ներքը տրուած դաստիարակութիւն՝ պատմութեան, աշխարհագրութեան կամ այլ նման գիտութեան պէս նիւթ: Այլապէս Ղութունուին առիթ պիտի չունենար խօսելու-տեսակցելու Գրիգոր Բ-ի հետ ինչ որ Թաթար սովորութեանց մասին:

Գրիգոր Բ եւս մասնակցած է շինարարութեանց եւ վանական նուիրատուութեանց. «Ի Թուին ՈՂԵ (1246)... կամակցութեամբ Գրիգորո եւ Ասլանպէկա որդոց Մարծպանա» Սանահինէն կը բաժնուի «եւ միարանեցա Բարձրաքաչիս...: Եւ ըստ կարի աւզնեցի շինութեան տանս եւ արարի ինձ գերեզմանատուն» կ'արձանագրէ «ես որդի Գաւկա», առանց իր անունը տալու (Յիշատ. 26): Գրիգոր Բ իր Սանահինի գրատան արձանագրութեան մէջ կ'ըսէ. «Ի Թուիս Զ (1251): Կաման Աստուծոյ, ես՝ Գրիգոր իշխան միարանեցա սուրբ ուխտիս Սանահինս» (Յիշատ. 5): Գրիգոր իւր մասնակցող կը յիշուի Գոշայ վանքին Ս. Աստուածածնի եկեղեցոյն կամարին վրայի, անթուական, իր հօր Մարգարանի արձանագրութեան մէջ. «Ես Մարգարան իշխան եւ որդիք իմ Ասլան բէզ եւ Գրիգոր միարանեցաք սուրբ Աստուածածնիս» (Յիշատ. 16):

Բարձրաքաչի շինութիւնը հաւանաբար Գրիգորի մեծագոյն եւ լաւագոյն գործն է: Գժբայտաբար անթուական է վանքի ժամատան ներքին կողմը կամարածեւ արձանագրութիւնը, ուր կ'ըսէ. «Ես Գրիգոր որդի Մարծպանայ յետ մահուան հաւրն իմո շինեցի զԳրիգորաշէն եւ ետու յիմ վանքս... (կալուածներ) ...գաւազ սուրբ նշանն աւետարան պատուական գրեան եւ զարդ եկեղեցո...» (Յիշատ. 27): Որոշ է որ Բարձրաքաչի շինութեան ատեն մեռած էին թէ՛ Գրիգորի հայրը՝ Մարգարան Բ, եւ թէ՛ իր կիներ՝ Մամբան տիկին: Վանքին շինութեան մէջ բաժին ունեցած է նաև իր Ասլան բէզ եղբայրը ըստ Բարձրաշէնի ժամատան փճացած մէկ արձանագրութեան, որուն ինչ կամ քարերէն կարելի է կարդալ «(Գր)իգորս եւ Ասլանպէկս որդոց Մարծ-

(3) Թէեւ հպատակ չունիմ եղած բազմաթիւ շինութիւնները զանազան հեղինակներու քով ճշդելու եւ պարզելու, սակայն անհրաժեշտ կը համարեմ ընելու սա ճշդումը: Ալոյցածեան, որ օգտուած է Աճառեանի «Անճառեանի Բառարան»էն, սխալ հասկցեր է Աճառեանի սա գրածը. «5. Մամբան, կին Գրիգորի (Թիւ 302)՝ եղբոր Համագասպի, որ էր կալիսկոպոս եւ առաջնորդ Հաղբատի»: Իսկ Ալոյցածեան ասիկա հասկցեր է «Մամբան քոյրն էր Հաղբատի առաջնորդ Համագասպ կոչ.ի» («Պատ. Հայաստանի Սահմանները», էջ 273): Աճառեան Գրիգորն է որ Համագասպի եղբայր կարծած է: